



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կրեդո Ֆինանս» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կրեդո Ֆինանս» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՖՀՄՄ) համապատասխան, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՖՀՄՄ) համապատասխան:

Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԿ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԿ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2025 թվականի ապրիլի 7-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՖՀՄՍ) համապատասխան, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի յուրմն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ ու համապատասխան հիմք են հաւոյիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված, քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը,
- եզրահանգումներ ենք դեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր

Գայանե Թովմասյան

Աուդիտոր

14 մայիսի 2026թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

3

Ֆինանսական հաշվետվություններ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

6

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

8

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

10

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ


'000 դրամ	Ծան.	2025	2024
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	256,671	249,957
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(281,481)	(258,780)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		(24,810)	(8,823)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	400,712	368,601
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	6	-	-
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		400,712	368,601
Ակտիվների հնարավոր կորուստներից զուտ շահույթ/վնաս	7	(32,121)	10,868
Այլ գործառնական եկամուտներ	8	44,313	46,633
Գործառնական եկամուտներ		388,094	417,279
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(281,417)	(271,232)
Այլ ծախսեր		(15,844)	(21,209)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		90,833	124,838
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	10	(16,507)	(17,120)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		74,326	107,718
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումներ			
Դրամական հոսքերի հեջավորում			
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ			
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք այլ ծախսից հետո			
Համապարփակ ֆինանսական արդյունք		74,326	107,718

6-ից 35-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվություններն ու դրանց կից ծանոթագրություններն ընդունվել և հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 14.05.2026թ.:

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ


Գործադիր տնօրեն՝ Բելլա Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ՝ Վարդանուշ Մինասյան



‘000 դրամ	Ծանոթ.	31/12/25	31/12/24
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	11	44,982	23,284
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11	53,636	52,306
Հաճախորդներին տրված ամորտիզացվող արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	12	1,336,703	1,362,468
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	22,580	6,139
Օգտագործման իրավունքով հիմնական միջոցներ	13	37,149	51,401
Հաշվեգրված տոկոսներ	14	23,815	19,158
Կանխավճարներ հարկերի և պարտադիր վճարների գծով	17	16,797	-
Հետաձգված հարկային ակտիվներ		6,524	6,442
Այլ ակտիվներ	15	16,124	12,122
Ընդամենը ակտիվներ		1,558,310	1,533,320
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	-	-
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	17	22,778	14,033
Ներգրավված ժամկետային փոխառություններ	18	1,213,464	1,094,169
Վճարվելիք տոկոսներ	19	1,324	65,892
Պարտավորություններ վարձակալության գծով	20	54,203	71,663
Այլ պարտավորություններ	21	6,735	4,844
Ընդամենը պարտավորություններ		1,298,504	1,250,601
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	22	164,245	164,245
Գլխավոր պահուստ		15,888	10,770
Զբաղիված շահույթ (վնաս)		79,673	107,704
Ընդամենը կապիտալ		259,806	282,719
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		1,558,310	1,533,320

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Բելլա Գաբրիելյան



Գլխավոր հաշվապահ՝ Վարդանուշ Մինասյան


«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

‘000 դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	ՖՀՄՍ 9-ի հետ կապված արժեզրկում	Զբաղյալ շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	164,245	8,316	(16,233)	65,325	221,653
Մասհանումներ գլխավոր պահուստին		2,454		(2,454)	
Համապարփակ եկամուտ			(573)	108,291	107,718
Շահութաբաժիններ				(46,638)	(46,638)
Նախորդ տարիների ֆինանսական արդյունքի ճշգրտում				(14)	(14)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	164,245	10,770	(16,806)	124,510	282,719
Մասհանումներ գլխավոր պահուստին		5,118		(5,118)	
Համապարփակ եկամուտ			(2,384)	76,710	74,326
Շահութաբաժիններ				(97,239)	(97,239)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	164,245	15,888	(19,190)	98,863	259,806

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Բելլա Գաբրիելյան



Գլխավոր հաշվապահ՝ Վարդանուշ Մինասյան

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
2025 2024


‘000 դրամ

1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	10,138	107,553
Ստացված տոկոսներ	639,071	596,159
Վճարված տոկոսներ	(279,159)	(201,269)
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ		
Ստացված շահաբաժիններ		
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(167,526)	(122,451)
Վճարված հարկեր	(147,563)	(113,164)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(34,685)	(51,722)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	118,922	(8,577)
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	-	-
Ներգրավված վարկերի և փոխառությունների (նվազում)ավելացում	119,294	96,199
Տրամադրված վարկերի ավելացում(նվազում)	(372)	(104,776)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից		
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	129,060	98,976
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	•	
Ընկերություններում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(14,792)	(875)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	(14,792)	(875)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահաբաժիններ	(92,376)	(44,305)
Բանկերից ստացված վարկերի ավելացում/նվազում	-	(41,500)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	(92,376)	(85,805)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	21,892	12,296
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	23,492	11,195
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	45,384	23,491

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Բելլա Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ՝ Վարդանուշ Մինասյան



10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) հիմնադրվել է հիմնադիրների 2012թ-ի նոյեմբերի 27 հիմնադիր ժողովի որոշմամբ: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է մասնակիցների կողմից ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքից: Ընկերությունն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական միջոցները, ստանալ վարկեր և փոխառություններ, իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր, լինել գրավառու և գրավատու, վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի ու քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից:

Ընկերության իրավաբանական հասցեն է ՀՀ ք.Երևան, Կիլյան 2-րդ նրբանցք, տուն 16:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է 42 աշխատող (2024-ին՝ 46 աշխատող):

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից մշակված և հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն:

2.2 ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.3 ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումները

վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև՝

2.5 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև՝

ՀՀՄՄ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից՝

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ՝ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- **ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»**

2024թ. ապրիլին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՄ 18-ը ներառում է ՀՀՄՄ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՄ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՄ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՄ 8-ը կվերանվանվի «Ֆինանսական հաշվետվությունների պարաստման հիմունքներ»:

Ի հավելում, ՀՀՄՄ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի:

փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայումս գնահատում է ՀՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- «Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության բացահայտումներ» (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19-ի՝ «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության բացահայտումներ», փոփոխություններ (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

2.5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել: Հետևյալ չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» :

Ընկերության կողմից ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով յուրաքանչյուր օր, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Հաշվեգրվող գումարների չափի հաշվարկման հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Չաշխատող վարկերի և այլ ակտիվների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Նման տոկոսային եկամուտները ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են դրամարկղային մեթոդի համաձայն:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, մասնավորապես՝ առևտրորական, գովազդային, շենքի պահպանման, տեխնիկական սպասարկման պարտավորությունները, ինչպես նաև փոխադրամիջոցների օգտագործած վառելիքի ծախսային պարտավորությունները, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են հաշվեգրման սկզբունքով՝ ծառայությունների մատուցման ընթացքում կամ հիմք ընդունելով համապատասխան պայմանագրային պայմանները:

Շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ դրանց հայտարարման պահին:

Եթե ֆինանսական ակտիվները կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «այլ եկամուտ» կամ «այլ ծախս» հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Ստորև ներկայացված է ՀՀ ԿԲ-ի կողմից քահանանաձ տարեվերջյան փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	ՀՀ ԿԲ-ի հաշվարկային փոխարժեքը	ՀՀ ԿԲ-ի հաշվարկային փոխարժեքը
	31.12.2025թ-ի դրությամբ	31.12.2024թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	381,36 ՀՀ դրամ	396,56 ՀՀ դրամ
1 ԵՎՐՈ	449,01 ՀՀ դրամ	413,89 ՀՀ դրամ
1 Ռուսական ռուբլի	3,71 ՀՀ դրամ	3,71 ՀՀ դրամ

Հաշվետու տարում Ընկերությունն արտարժույթով իրականացրել է միայն մեկ գործարք Ռուսական ռուբլիով:

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով:

Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:

Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և հարկային պարտավորությունները հաշվանցվում են, երբ Ընկերությունն ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են «Այլ ծախսեր» հոդվածում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը և հաշիվները Ընկերություններում, որոնք կարճ ժամանակահատվածում կարող են փոխարկվել կանխիկ դրամի: Ընկերության դրամական միջոցների փաստացի ներհոսքի և կամ արտահոսքի ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով պատշաճորեն ձևակերպված փաստաթղթերի հիման վրա:

Ընկերությունը գործառնական գործունեության արդյունքում ստացած համախառն դրամական մուտքերի և վճարումների հիման վրա դրամական հոսքերի մասին հաշվետվությունը կազմելիս առաջնորդվում է ուղղակի մեթոդով:

Հաշիվներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ կամ տարբեր ժամկետներով ավանդային հաշիվները: Ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է այլ բանկերում բացված ընթացիկ կամ տարբեր ժամկետներով ավանդային հաշիվները: Ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առևտրական դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռքբերված գործիքները:

Բիզնես մոդելի և դրամական միջոցների հոսքերի համար իրականացվող գնահատումների արդյունքում Ընկերությունը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը: Ֆինանսական ակտիվների համար առկա են հետևյալ դասակարգումները՝

- Ամորտիզացված արժեք, չափվում են հավաքելու համար պահվող բիզնես մոդելում պահվող ակտիվները,
- Իրական արժեք՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, չափվում են հավաքելու և վաճառելու համար պահվող բիզնես մոդելում պահվող ակտիվները:
- Իրական արժեք՝ շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են այլ բիզնես մոդելում պահվող ակտիվները:

Ամորտիզացված արժեք

Սկզբնական դասակարգումը և չափումը

Ֆինանսական ակտիվները պետք է չափվեն ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են հետևյալ երկու պայմանները՝

դրանք դասակարգվում են հավաքելու համար պահվող բիզնես մոդելում, և դրանք առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են: Բաժնային գործիքներում ներդրումները, ինչպես նաև ածանցյալ գործիքները չեն բավարարում միայն "մայր գումարի և տոկոսների վճարումներ" գնահատման չափանիշներին, և հետևաբար դրանք չեն կարող դասակարգվել ամորտիզացված արժեքով հաշվառվող պորտֆելում:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստի գումարը: Տոկոսը հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Պահուստում ճանաչված սկզբնական գումարը, ինչպես նաև հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեք՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով

Սկզբնական դասակարգումը և չափումը

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ա) ակտիվը դասակարգվում է "հավաքելու և վաճառելու համար պահվող" բիզնես մոդելում,
- բ) այն առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի* և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ինչ վերաբերում է բաժնային գործիքներին, դրանց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է կատարել անշրջելի ընտրություն՝ կոնկրետ բաժնային գործիքները դասակարգել որպես իրական արժեքով հաշվառվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Այս որոշումը կատարվում է յուրաքանչյուր բաժնային գործիքի համար առանձին:

Հետագա չափումը

Պարտքային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Ընկերությունը շահույթում կամ վնասում է ճանաչում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսը, արժեզրկման պահուստի սկզբնական գումարն ու դրանց՝ հետագա փոփոխությունները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի տարբերությունների հետ կապված օգուտներն ու վնասները:

Պարտքային գործիքների ապաճանաչման կամ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվ վերադասակարգման ամսաթվի դրությամբ պարտքային գործիքների արտարժույթի փոխարժեքի տարբերությունների հետ կապված կուտակային օգուտներն ու վնասները վերադասակարգվում են շահույթում կամ վնասում:

Բաժնային գործիքներ

Եթե Ընկերությունը կատարել է ընտրություն և սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգել է բաժնային գործիքում կատարված ներդրումը որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, ապա այդբաժնային գործիքների իրական արժեքի հետագա

փոփոխությունները ներկայացվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ի տարբերություն պարտքային գործիքների, որոնք նախորոշվել են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, բաժնային գործիքների հետ կապված՝ Օգուտներն ու վնասները, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չեն փոխանցվում շահույթ կամ վնաս՝ չնայած այն բանի, որ կուտակային օգուտներն ու վնասները կարող են տեղափոխվել սեփական կապիտալի հոդվածների միջև (չբաշխված շահույթ), Բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման հաշվարկների:

Այն դեպքերում, երբ կազմակերպությունը կատարել է նման ընտրություն, շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեք՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք չեն բավարարում որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, դասակարգվելու չափանիշներին, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Ընկերությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվները, եթե կատարվել է այդ ֆինանսական ակտիվների կառավարմանն ուղղված բիզնես մոդելի փոփոխություն:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում առաջացնող բիզնես մոդելի փոփոխության դեպքում, վերադասակարգումը կատարվում է առաջընթաց՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող՝ կիրառելի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ.

- ա) ֆինանսական պարտավորությունների՝ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»: Այդպիսի պարտավորությունները, ներառյալ պարտավորություն հանդիսացող ածանցյալ գործիքները, պետք է հետագայում չափվեն իրական արժեքով:
- բ) ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են,
 - երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, մասնավորապես՝ եթե Ընկերությունը պահպանել է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և պետք է շարունակի փոխանցված ակտիվն ամբողջությամբ ճանաչել, իսկ ստացված հատուցման գծով պետք է ճանաչի ֆինանսական պարտավորությունը: Հետագա ժամանակաշրջաններում Ընկերությունը պետք է ճանաչի փոխանցված ակտիվից ստացված ցանկացած եկամուտ և ֆինանսական պարտավորության գծով կրած ցանկացած ծախս:
 - կամ երբ կիրառվում է շարունակական ներգրավվածության մոտեցումը: Այս մոտեցումը կիրառվում է, եթե Ընկերությունը ակտիվը ճանաչում է իր շարունակվող ներգրավվածության չափով, և ճանաչում է նաև դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չափվում են այնպիսի հիմունքով, որն արտացոլում է Ընկերության կողմից պահպանված իրավունքներն ու պարտականությունները: Համապատասխան պարտավորությունը չափվում է այնպես, որ փոխանցված ակտիվի և համապատասխան պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը՝
 - ա) Ընկերության կողմից պահպանված իրավունքների և պարտականությունների ամորտիզացված արժեքն է, եթե փոխանցված ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, կամ

բ) հավասար է Ընկերության կողմից պահպանված իրավունքների և պարտականությունների իրական արժեքին՝ առանձին չափվելու դեպքում, եթե փոխանցված ակտիվը չափվում է իրական արժեքով:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Ընկերության՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Ընկերությունից կարող է պահանջվել:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միևնույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Ընկերությունը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված

արժեքը կունի գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեքը կունի կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեքը կունի կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Ընկերությունը անմիջապես միջոցներ է տրամադրում պարտապանին՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով հնարավոր կորուստների պահուստներով:

Ֆինանսական ակտիվների արժեքը կունի

Հաշվեկշռային ամսաբաշխ դրությամբ Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեքը կունի աստիճանը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեքը կունի, և արժեքը կունի վնասը ճանաչվում է այն ժամանակ, երբ գոյություն ունի ակտիվի սկզբնական ճանաչմանը հաջորդող իրադարձությունների («ծախսային իրադարձությունների») արդյունքում առաջացած արժեքը կունի օբյեկտիվ վնասություն, և այդ ծախսային իրադարձությունը (իրադարձությունները) ազդեցություն ունի ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեքը կունի օբյեկտիվ վնասության որոշման համար օգտագործվող չափանիշներից են՝ պարտապանի կամ պարտապանների խմբի եական ֆինանսական դժվարությունների մասին վկայող ցուցանիշները (օրինակ՝ սեփական միջոցների գործակիցը, զուտ եկամուտ/վաճառք գործակիցը), տոկոսների և մայր գումարի վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ այլ պայմանների խախտումները, գրավի արժեքի նվազումը, սնանկացման կամ ֆինանսական այլ վերակազմավորման հավանականությունը, և երբ տեսանելի տվյալները վկայում են չափելի նվազման մասին ակնկալվող ապագա դրամական հոսքերում, ինչպիսիք են փոփոխությունները՝ պարտավորություններում կամ տնտեսական պայմաններում, որոնց վերագրվում են թերացումները: Ընկերությունը նախ գնահատում է արժեքը կունի օբյեկտիվ վնասության առկայությունը անհատական ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնաբար նշանակալի են, և անհատական կամ խմբային ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնաբար նշանակալի չեն: Եթե պարզվել է, որ գոյություն չունի արժեքը կունի օբյեկտիվ վնասության անհատական գնահատված ֆինանսական ակտիվի համար՝ անկախ էականության աստիճանից, ապա ակտիվը ներառվում է նույնանման վարկային ռիսկ ունեցող ֆինանսական ակտիվների խմբի մեջ, և ֆինանսական ակտիվների այդ խումբը ենթարկվում է խմբային գնահատման: Այն ակտիվները, որոնց անհատականորեն են ենթարկվում արժեքը կունի գնահատմանը, և որոնց գծով արժեքը կունի ճանաչվել է կամ շարունակում է ճանաչվել, չեն ներառվում արժեքը կունի խմբային գնահատման մեջ: Եթե պարտք ունի ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեքը կունի վնասի օբյեկտիվ վնասություն, ապա վնասի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված այն ապագա դրամական հոսքերի իրական արժեքի միջև

տարբերությունը (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի), որոնք գեղջվել են՝ օգտագործելով ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը (այսինքն, սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը): Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստի հաշվի միջոցով: Վնասի գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե վարկը կամ մինչև մարումը պահվող ներդրումը ունի փոփոխուն տոկոսադրույք, ապա արժեզրկման ցանկացած վնասի գեղջման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է չափել արժեզրկման վնասը գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը: Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը արտահայտում է գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը՝ հանած գրավի ձեռք բերման և վաճառքի հետ կապված ծախսերը, անկախ գրավի իրացման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, Ֆինանսական ակտիվները խմբավորվում են Կազմակերպության՝ վարկային դասակարգման ներքին համակարգի հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնորոշիչները, ինչպիսիք են ակտիվի տեսակը, արդյունաբերության ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետային կարգավիճակը և այլ նմանատիպ գործոններ:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերի փոփոխությունների գնահատումը պետք է արտահայտի և համապատասխանի տեսանելի կապակցված տվյալների փոփոխություններին (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գներում, վճարման կարգավիճակում, կամ խմբում արժեզրկումը մատնանշող այլ գործոններում կամ դրանց ծավալներում): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները անընդհատ վերանայվում են Կազմակերպության կողմից, որպեսզի նվազեցվի գնահատված և իրական վնասների միջև եղած տարբերությունները:

Վարկերը՝ կապակցված պահուստների հետ մեկտեղ, դուրս են գրվում, երբ գոյություն չունի ապագայում վարկի հավաքագրելու իրատեսական հեռանկար, և բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Կազմակերպությանը: Եթե հաջորդող մարում գնահատված արժեզրկման վնասի գումարը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչմանը հաջորդող իրադարձությունների արդյունքում, ապա նախկինում ճանաչված արժեզրկման վնասը ավելացվում կամ նվազեցվում է պահուստային հաշիվը ճշգրտելու միջոցով: Եթե ապագա դուրս գրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ

«Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտել 2019թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերության գրասենյակն ու մասնաճյուղերը գործում են վարձակալած տարածքներում: Հաշվետու տարում Ընկերությունը թվով վեց վարձակալական պայմանագրերի գծով ճանաչել է օգտագործման իրավունքով ակտիվներն ու դրանցից բխող պարտավորությունները համաձայն ՖՀՄՍ 16-ի պահանջների:

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները որպես Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն, այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վերաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ զեղչեր:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկսման պահին Ընկերությունը վարձակալության գծով կրեդիտորական պարտքերը չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն, ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխում վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Ընկերությունը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հողվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Դրույքաչափ (%)
Գույք և գրանցելակալի սարքավորումներ	5	20
Համակարգիչներ	1-5	100-20
Այլ հիմնական միջոցներ	8	12.5
Ոչ նյութական ակտիվներ	10	10

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կհոսեն դեպի Ընկերություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է չբաշխված շահույթին՝ կազմակերպության կողմից ակտիվների օգտագործմանը զուգընթաց: Վերագրվող գումարի մեծությունը հավասար է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությանը:

Երբ վերագնահատված ակտիվները դուրս են գրվում կամ օտարվում են, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութային ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

Վարձակալություն

Վարձակալության պայմանագրով (որի շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ) վարձակալության ժամկետի սահմանում, ներառյալ այն, թե արդյոք Ընկերությունը ողջամտորեն մտադիր է կիրառել վարձակալի ընտրելու հնարավորությունը, և կայացնել վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշում:

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները որպես Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն, այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վերաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ գեղչեր:

Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների, փոխատուների և հիմնադիր կողմի նկատմամբ պարտավորությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապահանջվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել: Պահուստը դա անորոշ ժամկետով պարտավորություն է: Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել: Եթե նշված պայմանները չեն բավարարվում, ապա Ընկերությունը պահուստ չի ձևավորում: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Պահուստին վերաբերվող ծախսը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կարող է ներկայացվել զուտ հիմունքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի: Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական պարտավորությունը դա հնարավոր պարտականություն է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից, կամ ներկա

պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը սակայն չի ճանաչվում հետևյալ պատճառներով.

հավանական չէ, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, կամ

պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական ակտիվը դա հնարավոր ակտիվ է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից:

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն եթե դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է, ապա պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

> Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՆՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների վրա: Պատմական փորձի և տվյալ պայմաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հետ կապված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ընկերության համար կապակցված կողմեր են

1. կազմակերպությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են Ընկերությանը կամ վերահսկվում նրա կողմից, կամ Ընկերության հետ ընդհանուր վերահսկողության տակ են գտնվում,
2. ասոցիացված կազմակերպությունները
3. համատեղ վերահսկվող միավորները
4. քաղաքացիները (ներառյալ՝ դրանց ընտանիքի մտերիմ անդամները), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն Ընկերությունում ունեն այնքան ձայնի իրավունք, որը նրանց կազմակերպության վրա նշանակալի ազդեցության հնարավորություն է տալիս,
5. հանգուցային կառավարչական անձնակազմը, այսինքն այն անձինք, որոնք իրավասու են և պատասխանատվություն են կրում հաշվետու կազմակերպության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ կազմակերպությունների տնօրենները, պաշտոնատար անձինք՝ և նրանց ընտանիքի մտերիմ անդամները,
6. կազմակերպությունները, որոնցում զգալի քանակությամբ ձայների իրավունքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է «4» և «5» կետերում նկարագրված ցանկացած անձի, կամ որոնց վրա այդպիսի անձինք ունեն նշանակալի ազդեցություն: Դրանցից են այն կազմակերպությունները, որոնք պատկանում են հաշվետու կազմակերպության տնօրեններին կամ խոշոր բաժնետերերին, և այն կազմակերպությունները, որոնք հաշվետու կազմակերպության հետ ունեն հանգուցային կառավարչական անձնակազմի ընդհանուր անդամ:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական գներով: Գործող շուկայի բացակայության դեպքում շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքների կիրառումը որոշվում է դատողությունների հիման վրա: Դատողությունները հիմնվում են այլ

հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

➤ Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականություն մեջ

Մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ թույլ տված և հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալները, որոնք հետևանք են թվաբանական անճշտությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում թույլ տված սխալների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության, ենթակա են ուղղման, որպես կանոն, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում: Թույլ տված այն սխալները, որոնք ունեն այնպիսի նշանակալի հետևանքներ նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա, որ դրանք չեն կարող այլևս արժանահավատ համարվել, համարվում են էական սխալներ:

Ընկերությունն ուղղում է նախորդ ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության դեպքում

- Ընկերությունը հաշվառում է ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն (եթե այդպիսիք կան)
- Երբ Ընկերությունը փոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ կապված որևէ ՖՀՄՍ-ի առաջին անգամ կիրառման հետ, որը չի ներառում այդ փոփոխությանը վերաբերող կոնկրետ անցումային դրույթներ, ապա Ընկերությունը այդ փոփոխությունը կիրառում է հետընթաց:

➤ Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերն այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում (ստորագրվում) են ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար:

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով /դեպքեր, որոնք հաստատում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող պայմանները կամ իրավիճակը/:

Եթե էական սխալի գումարը, կախված տվյալ գործարքի կամ հողվածի չափից և բնույթից, չի գերազանցում Ընկերության հաշվեկշռային ակտիվների հանրագումարի մեկ տոկոսը, և եթե այդ տեղեկատվության բացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված ֆինանսական դրության մասին հաշվետվության մեջ փոփոխություններ չեն կատարվում:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով /դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո առաջացած պայմանները կամ իրավիճակը/:

Եթե սեփական կապիտալի գործիքներ տիրապետողների շահաբաժինները առաջադրված կամ հայտարարված են հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյոք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, դեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահանջվող պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների:

Առանձնաբար նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ցուցանիշների վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

3. ՏՈՎՈՍԱՅԻՆ և ՆՄԱՆԱՏԻՊ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

	հազ. դրամ	
	2025 թ.	2024 թ.
Տոկոսային եկամուտներ Բանկային հաշիվներից և ավանդներից	4,568	4,667
Տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից		
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	252,103	245,290
Այլ տոկոսային եկամուտներ		
Ընդամենը	256,671	249,957

4. ՏՈՎՈՍԱՅԻՆ և ՆՄԱՆԱՏԻՊ ԾԱԽՍԵՐ

	հազ. դրամ	
	2025 թ.	2024 թ.
Տոկոսային ծախսեր Բանկերից ստացված վարկերի դիմաց	(94)	(929)
Տոկոսային ծախսեր ֆիզ. անձանցից ստացված փոխառությունների դիմաց	(281,387)	(257,851)
Այլ տոկոսային ծախսեր	-	-
Ընդամենը	(281,481)	(258,780)

5. ԿՈՄԻՍԻՈՆ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

	հազ. դրամ	
	2025 թ.	2024 թ.
Միջնորդավճարներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններից	2,965	4,639
Այլ միջնորդավճարներ ֆիզիկական անձանցից	397,747	363,962
Այլ միջնորդավճարներ ապահովագրական ընկերություններից	-	-
Ընդամենը	400,712	368,601

6. ԿՈՄՍԻՍԻՈՆ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ ԾԱԽՍԵՐ

հազ. դրամ

	2025 թ.	2024 թ.
Միջնորդավճարներ		
Տույժեր ու տուգանքներ		
Այլ միջնորդավճարներ ապահովագրական ընկերություններից		
Ընդամենը	-	-

7. ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՆԵՐԻՑ ԶՈՒՑ ԾԱՀՈՒՅԹ/ՎՆԱՍ

հազ. դրամ

	2025 թ.	2024 թ.
Վարկերի գծով կորուստների վերականգնումից եկամուտներ	294,187	311,228
Հատկացումներ տրամադրած վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստներին	(323,924)	(299,787)
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկման պահուստի ճշգրտում	(2,384)	(573)
Ընդամենը	(32,121)	10,868

8. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՑՆԵՐ

հազ. դրամ

	2025 թ.	2024 թ.
Եկամուտներ երաշխիքներից	-	232
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	44,313	46,401
Ընդամենը	44,313	46,633

9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

հազ. դրամ

	2025 թ.	2024 թ.
Աշխատակազմի գծով ծախսեր	(171,144)	(157,561)
Աուդիտի և այլ խորհրդատվական գծով ծախսեր	(2,312)	(2,313)
Հիմնական միջոցների վարձակալության, սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(22,024)	(31,469)
Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր	(16,177)	(17,009)
Գովազդի ծախսեր	(17,071)	(18,977)
Մաշվածության գծով ծախսեր	(2,085)	(460)
Կազմակերպչական ծախսեր	(36,340)	(22,619)
Այլ վարչական ծախսեր	(14,264)	(20,824)
Ընդամենը	(281,417)	(271,232)

10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

10.ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Շահութահարկի դրույքաչափը գործող օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում 2025թ-ին կազմում է 18% (2024թ-ին՝ 18%): Հետաձգված շահութահարկի գումարը ևս հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ընկերությունը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերը հարկային առումով հաշվարկելիս առաջնորդվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն ուղղված պարզաբանումով, համաձայն որի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերի ճանաչման համար պետք է հիմք ընդունել վարկերի և փոխառությունների պայմանագրերում ամրագրված անվանական տոկոսադրույքները:

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	(16,590)	(23,792)
Հետաձգված հարկի գծով ժամանակավոր տարբերություններ	83	6,672
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	(16,507)	(17,120)

11. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	հազ. դրամ	
	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
Դրամարկղ		
Կանխիկ դրամ դրամապահոցում	5,118	2,742
Հաշվարկային հաշիվ		
«ԱՇԻԲ» ՓԲԸ	36,305	17,714
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ	3,660	2,734
«ԱՄԵՐԻԱ բանկ» ՓԲԸ	301	301
Մասհանում պահուստին	(402)	(207)
Ընդամենը	44,982	23,284

ՊԱՀԱՆՋՆԵՐ ԲԱՆԿԵՐԻ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

	հազ. դրամ	
	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
Ավանդային հաշիվ «ԱՇԻԲ» ՓԲԸ	50,000	50,000
«ԻԴՐԱՄ»	2,731	1,389
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ	1,685	1,800
Մասհանում պահուստին	(780)	(883)
Ընդամենը	53,636	52,306

12. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ԱՅԼ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազ. դրամ

	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
Ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ	1,415,850	1,420,198
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	(59,957)	(40,924)
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ համաձայն ՖՀՄՍ-9-ի	(19,190)	(16,806)
Ընդամենը	1,336,703	1,362,468

13. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ՈՋ ԼՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

հազ.դրամ

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Գույք և և գրասենյակային սարքավորումներ	Համակազային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքով ակտիվներ
Սկզբնական արժեք						
Մնացորդն առ 31.12.2023թ.	12,843	14,627	10,615	6,548	44,634	91,473
Ավելացում	241	634	-	-	875	16,492
Օտարում, դուրսգրումներ	90	5	1	-	96	
Մնացորդն առ 31.12.2024թ.	12,995	15,256	10,614	6,548	45,413	107,965
Ավելացում	1,768	405	-	16,375	18,548	
Օտարում, դուրսգրումներ		-				
Մնացորդն առ 31.12.2025թ.	14,763	15,661	10,614	22,923	63,961	107,965
Մաշվածք						
Մնացորդն առ 31.12.2023թ.	11,700	10,400	10,516	5,145	37,760	34,285
Տարվա մաշվածություն	349	1,064	44	150	1,607	22,279
Կուտակված արժեզրկում, դուրսգրումներ	90	4	-	-	94	
Մնացորդն առ 31.12.2024թ.	11,959	11,459	10,560	5,295	39,273	56,564
Տարվա մաշվածություն	347	1,076	21	664	2,108	14,252
Կուտակված արժեզրկում, դուրսգրումներ						
Մնացորդն առ 31.12.2025թ.	12,306	12,535	10,581	5,959	41,381	70,816

10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ջուտ հաշվեկշռային արժեք						
Առ 31.12.2024թ.	1,035	3,797	54	1,253	6,139	51,401
Առ 31.12.2025թ.	2,457	3,126	33	16,964	22,580	37,149

14. ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐ

հազ. դրամ

	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
ՀՀ բանկերում ներդրված ավանդներից տոկոսներ	1,039	1,093
Ֆիզիկական անձանց տրված վարկերի և փոխառությունների զծով ստացվելիք տոկոսներ	22,776	18,065
Այլ	-	-
Ընդամենը	23,815	19,158

15. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	31.12.2025 թ.	հազ. դրամ 31.12.2024 թ.
Դեբիտորական պարտքեր այլ անձանց	-	-
Կանխավճարներ մատակարարներին	190	666
Կանխավճարված աշխատավարձ	263	300
Այլ կանխավճարներ	15,671	11,247
Հնարավոր կորուստների պահուստ		(90)
Ընդամենը	16,124	12,122

16. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

	31.12.2025 թ.	հազ. դրամ 31.12.2024 թ.
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	-	-
Ընդամենը	-	-

17. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՏՄԱՄԲ

	31.12.2025 թ.		31.12.2024 թ.
	Կրեդիտորական պարտք	Տրված կանխավճար	
Շահութահարկ	16,589	13,539	13,536
Ավելացված արժեքի հարկ	278		
Եկամտային հարկ	4,569		(366)
Կուտակային կենսաթոշակ	1,025		1,080

Դրոշմանիշային վճար	145		
Ապահովագրավճար	172		
Այլ պարտադիր վճարներ		3,258	(217)
Ընդամենը	22,778	16,797	14,033

18. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ցպահանջ փոխառություններ	-	-
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառություններ	1,213,464	1,094,169
Ընդամենը	1,213,464	1,094,169

19. ՎՃԱՐՎԵԼԻՔ ՏՈԿՈՍՆԵՐ

	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսներ	-	-
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	1,324	65,892
Ռեպո համաձայնագրերի դիմաց հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	1,324	65,892

20. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

	հազ. դրամ	
	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ	61,500	85,060
Չկրած տոկոսային ծախսեր	(7,297)	(13,397)
Ընդամենը	54,203	71,663

21. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	հազ. դրամ	
	31.12.2025 թ.	31.12.2024 թ.
Արտաքին կրեդիտորական պարտքեր	4,605	1,601
Աշխատակիցների չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	1,460	2,549
Այլ կրեդիտորական պարտքեր	670	694
Ընդամենը	6,735	4,844

22. ԿԱՆՈՆԱԴՐԱՎԱՆ ԿԱՊԻՏԱԼ

31.12.25թ-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 164,244,510 (հարյուր վաթսուներկու միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր տաս) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 529,821 (հինգ հարյուր քսանինը հազար ութ հարյուր քսանմեկ) հատ սովորական (հասարակ) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 310 (երեք հարյուր տաս) ՀՀ դրամ անվանական արժեքով: Հաշվետու տարում Ընկերությունը կատարել է բաժնետիրոջ փոփոխություն:

10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

23. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են՝

Փոխառություններ

Մնացորդներ	Մնացորդ 31.12.2024 թ.	Փոխառության ստացում	հազ. դրամ	
			Փոխառության վերադարձ	Մնացորդ 31.12.2025 թ.
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ցպահանջ փոխառություններ	-			-
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառություններ	1,094,169	459,695	340,400	1,213,464
Ընդամենը	1,094,169	459,695	340,400	1,213,464

Վճարվելիք տոկոսներ

	Մնացորդ 31.12.2024 թ.	Հաշվեգրում	հազ. դրամ	
			Մարում	Մնացորդ 31.12.2025 թ.
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	65,892	563,010	627,578	1,324
Ընդամենը	65,892	563,010	627,578	1,324

24. ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետի մասին ծանոթագրությունը կազմված է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև մարման ամսաթիվը մնացած ժամանակաշրջանի մեթոդով:

Հազ. Դրամ

Ակտիվներ	2025թ.					Հաշվեկշռային արժեք
	1ամսից պակաս	1-ից 3 ամիս	3ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	
Դրամական միջոցներ և Դրանց համարժեքներ	44,982					44,982
Տրամադրված վարկեր	36,207	90,888	335,783	320,194	553,631	1,336,703

Օգտագործման իրավունքով ակտիվներ				37,149		37,149
Այլ ակտիվներ	6,524					6,524
Ընդամենը	87,713	90,888	335,783	357,343	553,631	1,425,358

Պարտավորություններ	1ամսից պակաս	1-ից 3 ամիս	3ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5տարուց ավելի	Հաշվեկշռային ն արժեք
Ներգրավված փոխառություններ և վճարվելիք տոկոսներ				1,123,464	90,000	1,213,464
Այլ պարտավորություններ	2,236					2,236
Պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով				54,203		54,203
Ընդամենը	2,236			1,177,667	90,000	1,269,903
Զուտ դիրք	85,477	90,888	335,783	820,324	463,631	155,455

Հազ. Դրամ

2024թ.

Ակտիվներ	1ամսից պակաս	1-ից 3 ամիս	3ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Հաշվեկշ ռային արժեք
Դրամական միջոցներ և Դրանց համարժեքներ	23,284					23,284
Տրամադրված վարկեր	50,529	122,020	396,605	112,641	680,673	1,362,468
Օգտագործման իրավունքով ակտիվներ				51,401		51,401

10-35 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Այլ ակտիվ ներ	12,122					12,122
Ընդամենը	85,935	122,020	396,605	164,042	680,673	1,449,275

Պարտավորություններ	1ամսից պակաս	1-ից 3 ամիս	3ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5տարուց ավելի	Հաշվեկշռային արժեք
Ներգրավված փոխառություններ և վճարվելիք տոկոսներ				1,004,169	90,000	1,094,169
Այլ պարտավորություններ	84,769					84,769
Պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով				71,663		71,663
Ընդամենը	84,769			1,075,832	90,000	1,250,601

Զուտ դիրք	1,166	122,020	396,605	911,790	590,673	198,674
-----------	-------	---------	---------	---------	---------	---------

25. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂ

Ընկերությունը հաշվետու տարում արտարժույթով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ չունի:

26. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ և ՊՈՏԵՆՑԻԱԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերությունն արտահաշվեկշռում հաշվառված պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ չունի:

27. ԱԿՏԻՎՆԵՐԻ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՐՏԱՀԱՇՎԵԿԵՐՈՒՄՅԻՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Տեղաբաշխված վարկերի, ավանդների գծով ստացվելիք գումարներն ըստ տնտեսության ճյուղերի	2025թ.	2024թ.
Սպառողական վարկեր	1,336,703	1,362,468

Տեղաբաշխված վարկերի գծով ստացվելիք գումարները Երևանում և ըստ ՀՀ մարզերի	31.12.2025թ.	31.12.2024թ.
ա) Երևան	953,260	998,271
բ) Գեղարքունիք	15,961	14,064
գ) Շիրակ	28,541	15,511
դ) Լոռի	15,908	8,488

